Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գավառի N5 հիմնական

Թեմա՝ Տարրական դասարանների աշակերտների գրավոր և բանավոր խոսքի զարգացման ուղիները

Վերապատրաստող, մենթոր՝ Գոհար Շահինյան

Ուսուցիչ՝ Նվարդ Կիրակոսյան

Գավառ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
I գլուխ	6
II գլուխ	21
Եզրակացություն	42
Օգտագործված գրականության ցանկ	44

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեման ավելի քան արդիական է, քանի որ բանավոր և գրավոր խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյա են ներխուժել համակարգչային նորագույն խաղեր, որոնք ինչպես հայտնի է, չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Երխաներն ավելի շատ ժամանակ անցկացնելով համակարգիչների առջև կամ հեռախոսներով խաղալիս, գրեթե չեն հաղորդակցվում հասակակիցների հետ, ինչի արդյունքում նրանց բառապաշարը շատ աղքատ է, խոսքում կիրառում են ժարգոնային բառեր, անհարկի օտարա-բանություններ, ուստի կրտսեր դպրոցականների մոտ բանավոր և գրավոր ինքնուրույն գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորումն ու զարգացումն խիստ անհրաժեշտություն է: Նախադպրոցական տարիքի երեխաների գործունեության բոլոր ձևերը պետք է ուղեկցվեն խոսքով, որպեսզի երեխաներն ազատ կարողանան հաղորդակցվել ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ: Հարկ է նշել նաև, որ այս տարիքի երեխաների մեջ լինում են առողջ երեխաներ, որոնք դեռևս արտաբերման իմաստով չունեն վերջնականապես ձևավորված դժվար հնչյունները վերարտադրելու կարողությունները: Այս հանգամանքը պետք է գրավի ուսուցչի ուշադրությունը և նրան ուղղորդի հնչյունային համակարգի վարժությունների կատարմանը: Մուլտերը, տարբեր լեզուներով ֆիլմերը, հոլովակները, խանգարում են, որպեսզի լիարժեք ձևավորվի խոսքը: Հաճախ առաջանում է նաև երկլեզվություն, ինչը շատ ժամանակ խանգարում է և դժվարեցնում խոսքի զարգացմանը:Առանց յուրացնելու մեկ լեզու, երկրորդ լեզվի ներմուծումը խանգարելում է նաև լեզվամտածողության զարգացմանը: Խոսքի ձևավորման և զարգացման համար շատ կարևոր է երեխայի հետ անմիջական շփումը: Պետք է սահմանափակել տարբեր էլեկտրոնային միջոցների հետ երեխայի տևական շփումը . այն միայն պասիվ խոսքի ընկալում է և

չի ենթադրում կենդանի շփում: Երեխայի ընտանիքը կարող է ինչպես նպաստել տվյալ խոսքային խանգարման շտկմանը, այնպես էլ խոչընդոտել: Երեխայի մոտ կարող է առաջանալ թերարժեքության բարդույթ, միայնակության զգացում, դեպրեսիա, գիշերամիզություն, մղձավանջներ և այլն:

Այդ իսկ պատճառով ծնողի իրազեկված լինելը կօգնի, խնդրի շտկման արագացմանը: Ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունի տեսական և կիրառական գործոնների ինտեգրման միասնությունը:

Թեմայի ուսումնասիրման նպատակը ներկա հասարակական, տնտեսական զարգացման պայմաններում անչափ կարևորվում է սովորողների մոտ ձևավորելու նոր միջավայրում արագ ինտեգրվելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու, եղած գիտական ներուժը տեղայնացնելու և որոշումներ կայացնելու հմտությունները: Դա անհնար է իրականացնել, եթե երեխաների մեջ չձևավորվի կապակցված և գրագետ խոսքը: Լեզվի մեջ և լեզվի միջոցով է, որ երեխան շրջապատի բնության ու հասարակության մասին ստանում է այն տղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու և պայքարելու համար: Այժմ աշակերտների մեծամասնությունը դժվարանում է հստակ ու գրագետ արտահայտել սեփական մտքերը, որն էլ մտահոգության տեղիք է տալիս, ինչն էլ շատ մասնագետների մղում է որոնել առավել հարմար, մատչելի ու արդյունավետ մեթոդներ՝ լուծելու այդ խնդիրները: Դասարանից-դասարան ուսուցման նպատակներն ու խնդիրներն տարբեր են:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել տարրական դասարաններում սովորողների խոսքի զարգացման ուղիների արդյունավետ մեթոդները և մեթոդների արդյունավետության գնահատումը:

Ուսումնասիրության հիմնական նպատակով առաջադրվել են հետևյալ ***խնդիրները՝***

- Դիտարկել կրտսեր դպրոցականների շրջանում խոսքի ուսուցման տեսական - մեթոդաբանական հիմքերը:

- Մանրամասն ուսումնասիրել բանավոր և գրավոր ինքնուրույն գրագետ խոսք ձևավորելու եղանակներն ու միջոցները:

Աշակերտները մինչ չորրորդ դասարանի ավարտը բավականաչափ հմտություն պետք է ցուցաբերեն դրանց վերաբերյալ գործնական վարժությունների կատարման ժամանակ, ինչպես նաև հարց ու պատասխանի ժամանակ պետք է հնչեցնեն հստակ և սպառիչ պատասխաններ, ինքնուրույն շարադրեն որոշակի մտքեր, ինքնուրույն աշխատանքների ժամանակ ցուցաբերեն ակտիվության և առաջադիմության բարձր ցուցանիշ:

Առաջադրված խնդիրների իրագործման համար ուսումնասիրել եմ նյութի վերաբերյալ մասնագիտական և մեթոդական գրականություն, հանրակրթության պետական փաստաթղթերը, դրանց հիման վրա ստեղծված առարկայական չափորոշիչները և ծրագրերը, ուսումնաօժանդակ ձեռնարկները, դասագրքերը, դրանցից բացի նաև իմ սեփական փորձը: Այս ամենի հիման վրա և ձեռք բերված տվյալներն ընդհանրացնելով՝ ներկայացրել եմ գրավոր և բանավոր խոսքի զարգացման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

I ԳԼՈՒԽ

Երեխայի ընդհանուր զարգացումը առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Աշակերտների խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկն է: Կապակցված խոսքի ստեղծումը, որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, առաջին դասարանից սկսած թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ ու արժեք է ստանում:

Լեզուն և խոսքը հասարակական-պատմական զարգացան արդյունք են, որոնցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ ամենալայն իմաստով:«Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները»: [[1]]

Լեզու և ***խոսք*** հասկացությունները նույն երևույթները չեն, թեև լեզվական գիտելիքների ձեռքբերման գործընթացը նույնպես նպաստում է սովորողների խոսքի զարգացմանը: «Լեզուն մի կուռ համակարգ է, անընդհատ գործընթաց, միասնական մի ամբողջություն, որի մեջ բոլոր միավորները փոխադարձ կապի մեջ են գտնվում:

Լեզուն յուրաքանչյուրի մոտ մի ներքին ունակություն է, որ նրան հնարավորություն է տալիս հաղորդակցվելու մեկ ուրիշի հետ: Լեզվական պոտենցիալ կարողության այդ գործադրությունը կոչվում է **խոսողություն**»:[[2]]
Այսինքն՝ խոսքը դրսևորվում է հնչյունական շղթայի միջոցով:

Սկսած ուսումնական գործունեության առաջին օրից՝ երբ երեխան ծանոթանում է հնչյունին, վանկին, բառին, նախադասությանը, իսկ հետագայում խոսքի մասերին, նախադասության կառուցվածքին, նա ուսումնասիրում է լեզուն: Երբ աշխատանք է

---

[1] Գյուլամիրյան Ջ.«Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, 2015 էջ 262
[2] Սուքիասյան Ա. Մ. «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1989, էջ 21

տարվում նրա բանավոր և գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ, նա սովորում է լեզվից ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործադրել հաղորդակցական խնդիրների լուծման համար:Հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման ուղղությամբ աշխատանքն էլ նպատակաուղղված է խոսքի զարգացմանը: Շրջապատողների հաղորդակցման պահանջը և սոցիալական միջավայրը համարվում են երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոնները: Այդ գործընթացում երեխան պասիվորեն չի ընկալում մեծերի խոսքային կաղապարները, այլ ակտիվորեն յուրացնում է խոսքը՝ որպես համամարդկային փորձի մաս, որից էլ հետևում է, որ մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է:

Ընդհանրապես պետք է նկատել, որ «լեզու» հասկացությունը կարող է ըմբռնվել որպես մտածողության թաղանթ, այսինքն՝ որպես մարդկանց միջև հաղորդակցման միջոց:

Երկրորդ՝ լեզուն կարող է ըմբռնվել որպես այդ լեզուն կրող ժողովրդի կողմից հասարակականորեն մշակված հնչյունների, բառերի ու դրանց կապակցման միջոցների համակարգ:

Լեզուն յուրաքանչյուրի մոտ մի ներքին ունակություն է, որ նրան հնարավորություն է տալիս հաղորդակցվելու մեկ ուրիշի հետ: Այդ ունակությունը կյանք է ստանում, իրական վիճակի վերածվում այն ժամանակ միայն, երբ մարդն գործադրում է այն, այսինքն՝ մեկի հետ հաղորդակցվում, խոսում է: Լեզվական կարողության այդ գորընթացը կոչվում է **խոսողություն**:

Խոսքն, այսպիսով, լեզվի իսկական գոյավիճակն է, լեզվի կյանքը: Խոսքը գոյություն է ստանում ինչպես խոսելու և գրելու, այնպես էլ կարդալու և լուռ, ինքնին մտածելու ժամանակ:

Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է, քանի որ այս տարիքում երեխան սովորում է հազարավոր նոր

բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ, տարերայնորեն ընկալում է լեզվի այն հիմնական յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց, ուստի այս հանգամանքը հաշվի առնելով, տարրական դասարանները դարձնել երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակը, նրա մեջ լեզվազգացողության արթնացման ու մշակման, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան:

Խոսքը, որպես մտքի ու մտածողության դրսևորման ձև, լինում է երկու տեսակ՝ **ներքին** և **արտաքին**, իսկ արտաքինը՝ **բանավոր** և **գրավոր**:

Արտաքին խոսքն ունկնդիրներին ուղղված, արտասանված, հնչյունային ձև ընդունած խոսքն է:

Ներքին խոսքը չարտասանված, հնչյունային ձև չընդունած, չգրված, «մտածված» խոսքն է: Այն ուղղված է ինքն իրեն:Ներքին կամ անհնչյուն խոսքը գրեթե նույնանում է մտածողության հետ:Բնականաբար, նախ ծագում է ներքին խոսքը, ապա արտաքինը, սակայն ներքին խոսքը մեծ ֆունկցիա ունի մարդու համար ոչ միայն նրա մտավոր աշխարհի հարստացման ու ինքնուրույնացման, այլև բուն հաղորդակցման համար, և նրա մշակման ու զարգացման համար դպրոցում որոշակի աշխատանք պետք է տանել: Ներքին խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է առաջադրված հարցին պատասխանելուց առաջ պատասխանը մտքում պատրաստելու հանձնարարությունը: Այս դեպքում աշակերտները հարկադրված են լինում «մտքում խորհելու», վարժվում են իրենց պատասխանները նախապես կշռադատելու մեջ, որը և ներքին խոսքի զարգացմանը նպաստող առաջին նախապայմանն է:Իսկ երկրորդ նախապայմանը մտքում կամ լուռ կարդալու կարողության մշակումն է: Ներքին խոսքի զարգացմանը նպաստում է նաև ինքնուրույն գրավոր աշխատանքների կատարումը, որովհետև գրելուց առաջ երեխան հարկադրված է լինում գրելիքը մտքում ձևակերպելու, որը կատարվում է ներքին խոսքի ձևով:

Արտաքին խոսքի տեսակներն են մենախոսությունը ու երկխոսությունը:

Արտաքին խոսքն ունի դրսևորման երկու ձև՝ **գրավոր և բանավոր:**
Սովորողների խոսքի զարգացում ասելով առաջին հերթին նկատի է առնվում բանավոր և գրավոր, ինքնուրույն գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորումն ու զարգացումը:

Երեխաները դպրոց են գալիս խոսելու, պատմելու, արտասանելու, երգելու, իրենց տեսածը, լսածը, խոհերն ու զգացումները լեզվով արտահայտելու որոշակի կարողություններով ու հմտություններով, որոնք հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունեն նրանց հետագա առաջընթացի ու մտավոր զարգացման համարե:[3] Նրանք արտահայտվում են բանավոր խոսքով, իսկ բանավոր խոսքի զարգացումը ելակետային նշանակություն ունի նաև խոսքի ու մտածողության դրսևորման մյուս ձևերի՝ գրավոր ու մտային կամ ներքին խոսքի մշակման ու կատարելագործման համար, ուստի դասընթացում բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման աշխատանքներին մեծ տեղ է տրվում:

Խոսքը բաղկացած է երեք հիմնական բաղադրամասերից՝ **բառապաշար, քերականություն և խոսք կառուցելու կարողություն:**

«Տարրական դասարանների աշակերտների բառապաշարի նվազագույն և առավելագույն սահմանները մեզանում դեռևս չեն որոշված: Այս պայմաններում բառապաշարի հարստացման աշխատանքի գիտական կազմակերպումը բավականին դժվար է, և միայն մոտավոր չափով է, որ բառաքանակի ընդգրկման, ինչպես նաև բառախմբի կամ իմաստային դաշտերի ընտրրության հարցը կարող է ճիշտ լուծվել»:[4] Երեխաների շրջապատից ու հետաքրքրությունների շրջանակից վերցված թեմաները(ընտանիք, մանկապարտեզ, դպրոց, քաղաք և գյուղ, կնդանական և բուսական աշխարհ և այլն) հնարավորություն են տալիս հետաքրքրական բառային աշխատանք տանելու՝ հարստացնելու բառապաշարը:

---

[3] Ա. Ե. «Տեր-Գրիգորյան Հայոց լեզվի մեթոդիկա»,Երևան, 1980, էջ 412

[4] Ա. Ե. Տեր-Գրիգորյան, նշվ. Աշխ. էջ 416

Երեխաներին պետք է բացատրել, որ խոսքի տեսակները պայմանավորված են նրա բովանդակությամբ, այսինքն՝ այն հանգամանքով, թե ինչ հարց է պարզաբանվում տվյալ նյութում, ինչպես է այն պարզաբանվում, ինչ կարծիք ունի խոսողը պարզաբանվող հարցի մասին:

Խոսքի տեսակներն ըստ նշանակության լինում են՝ **պատմողական, նկարագրական, դատողական և գնահատող:**

Բանավոր խոսքը հանդես է եկել գրավորից վաղ՝ որպես հաղորդակցման անմիջական պահանջմունք: Գրավոր խոսքի ձևավորումն ու զարգացումը բանավորի համեմատ ավելի բարդ գործընթաց է, իրականացվում է դանդաղորեն: Բանավոր խոսքն իր արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը, որն ավելի մշակված ու հղկված է: Բանավոր խոսքն իր անմիջականությամբ ու արտահայտչականությամբ, մարդկային հույզերի, ապրումների, տրամադրությունների ու զգացմունքների ճիշտ արտահայտման ու դրանք լսողին փոխանցելու տեսակետից ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում, քան գրավոր խոսքը, որը միջնորդված խոսակցություն է գրողի և ընթերցողի միջև և չի ուղեկցվում դեմքի արտահայտության, ձայնի ելևէջների այնպիսի փոփոխությամբ, որոնք տեղի են ունենում խոսողի և խոսակցի միջև:

Բանավոր խեսքում կարևորվում են ուղղախոսությունն ու տարաբնույթ լեզվաարտահայտչամիջոցները, իսկ գրավոր խոսքում՝ ուղղագրությունն ու կետադրությունը:

Խոսելով մայրենի լեզվի ուսուցման մասին՝ Ուշինսկին նշում է երեք հիմնական նպատակ, որոնց պետք է հասնել ոչ թե աստիճանաբար, մեկը մյուսից հետո, այլ միաժամանակ, որովհետև դրանք անխզելիորեն կապված են միմյանց հետ:

Երեխաներին մայրենի լեզու սովորեցնելն ունի երեք նպատակ. նախ՝ երեխաների մեջ զարգացնել այն բնատուր հոգեկան ընդունակությունը, որ կոչում են **խոսելու ձիրք**, երկրորդ՝ միջոց տալ երեխաներին գիտակցաբար տիրապետելու

մայրենի լեզվի գանձերին և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը, այսինքն՝ նրա քերականական օրենքները՝ իրենց տրամաբանական համակարգի մեջոցով: [5]

Բառապաշարի զարգացման մեթոդներն ու միջոցները հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի շուրջ աշատանքի ժամանակ: Այդ աշխատանքները զարգացնող բնույթ ունեն և նպատակաուղղված են երեխաների մեջ հետաքրքրություն սերմանելու ուսման նկատմամբ, ինչպես նաև համապատասխան խթան և շահագրգռություն ստեղծելու, սովորելու նկատմամբ:
Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է կազմակերպել գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա: Բառային աշխատանքի քայլերն են՝

1. **Անծանոթ բառի առանձնացում**, իմաստի բացատրում, իմաստավորում:

   Այս խնդիրները լուծվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տրվող բառակազմական, բառաբարդման,վերլուծական, համադրական աշխատանքներով: Բառիմաստի բացատրությունը կարել է կատարել հետևյալ եղանակներով՝

   ա. բառի բացատրություն՝ ցուցադրելով համապատասխան առարկան,

   բ. բառի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով,

   գ. բառի ստուգաբանում, որի ժամանակ բառիմաստը բացատրվում է բառակազմական վերլուծության ճանապարհով,

   դ. բառի բացատրություն այլ՝ իմաստով մոտ բառերի օգնությամբ,

   ե. բառի բացատրություն հականիշների կամ հոմանիշների միջոցով,

   զ. բառի բացատրություն նկարելով:

[5] Կ.Դ. Ուշինսկի , «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան,1949, էջ 129-130

2. **Բառակազմական վերլուծություն,** որի հիման վրա բացահայտվում է անծանոթ բառի նշանակությունը: Աշակերտները բացահայտելով բառերի արմատները, ածանցները, աստիճանաբար կարողանում են պարզ բառերից կազմել բարդ և բարդածանցավոր, ինչպես նաև հոդակապով և անհոդակապ բառեր:

3. **Բառերի համեմատում՝ բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով,** որը ստեղծում է նույնարմատ բառերի իմաստային սահմանազատման հնարավորություն, օրինակ՝ ոսկի և ոսկեգույն, արծաթյա և արծաթափայլ, անտառ և անտառապահ, ծաղիկ և ծաղկավոր և այլն:

4. Բացատրություն **կռահման ճանապարհով**: Ուսուցիչը կարդում է անծանոթ բառ պարունակող նախադասություն և հարցնում աշակերտներին. «Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է նշանակել այս բառը: Կռահեք բառի իմաստը՝ մեկ անգամ ևս կարդալով նախադասությունը»:

5. **Նորածանոթ բառերի բացատրություն** տեղեկատվական նյութերի միջոցով, այսինքն՝ բառարաններով, դասագրքի տողատակում կամ հավելվածում տրված բացատրություններով, մանկական հանրագիտարանների հոդվածներով և այլն:

Բառապաշարի հարստացման և ճշտման ուղղությամբ իրականացվող աշխատանքի մեջ են մտնում նաև հոմանիշների և հականիշների յուրացման հետ կապված տարաբնույթ վարժությունները, դարձվածքների, առած-ասացվածքների ուսումնասիրումը:

Բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը:«Բառը, որպես լեզվական միավոր, գոյություն ունի ինքնուրույն ձևով՝ նախադասությունից դուրս և նախադասությունից անկախ, և լեզվական մյուս միավորները ծառայում են այդ ինքնուրույն միավորին, որովհետև հանդես են գալիս նրա հետ և առանց նրա չեն կարող գոյություն ունենալ»: [6]

Այսպիսով՝ ուսուցման ժամանակ բառանվանման կամ բառհասկացության յուրացումը տեղի է ունենում երկու ձևով: Առաջին՝ երեխային ցույց է տրվում,

[6] Է. Աղայան «Լեզվաբանության ներածություն», 1953, էջ 201

բացատրվում է առարկան կամ երևույթը և հետո անվանվում է այն, իսկ երկրորդ՝ առաջադրվում է բառը և ապա այն բացատրվում է:

Լեզվի բնական ուսուցումը կատարվում է առաջին ճանապարհով, քանի որ երեխան իր կենսագործունեության ընթացքում հանդիպում է բազմաթիվ անծանոթ առարկաների ու երևույթների և ցանկանում է իմանալ դրանց անունները: Ինչպես նշեցինք այս ձևը լայնորոն կիրառվում է ուսուցման ընթացքում. Ուսուցիչը ցույց է տալիս առարկան կամ երևույթը, ապա այն անվանում համապատասխան բառով: Հիմնականում անծանոթ բառերի ուսուցումը լինում է բացատրման եղանակով: Բառային աշխատանքի մեջ տարբերակվում է երեք կողմ՝ բառիմաստի բացատրում, արդեն ծանոթ բառերի հոմանիշների և հականիշների հայտնաբերում, և սովորած բառերի օգտագործումը խոսքի մեջ:

Բառապաշարի հարստացման գործում, անկասկած, մեծ դեր ու նշանակություն ունի ինչպես բառագիտության, այնպես էլ բառապաշարի տարբեր շերտերի ուսուցումը: Երեխաների բառապաշարը աստիճանաբար պետք է համալրել նոր բառերով, որպեսզի երեխաների մեջ կատարելագործվի խոսք կառուցելու կարողությունը:

Աշակերտների խոսքի զարգացման, ազատ ու անկաշկանդ արտահայտվելու կարողությունների մշակման համար կան բազմաթիվ մեթոդներ ու միջոցներ: Ուսուցման մեթոդներն ավանդաբար բաժանվում են 3 խմբի՝ **զննական, խոսքային և գործնական: [7]**

Զննական մեթոդները տարրական դասարաններում հաճախակի են օգտագործվում:Կարևորվում է իրազննությունը: Անհրաժեշտ է կազմակերպել դիտումներ, առարկաների նկարագրում:

Ուսուցիչն ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի,ավելի քիչ կատարի, ավելի շատ մասնակից դարձնի: Կարծում եմ, որ շատ ճիշտ է հետևյալ միտքը. «Ինձ

[7] Գյուլամիրյան, նշվ.աշխ., էջ 272

ասա, և ես կմոռանամ, ինձ ցույց տուր,և, միգուցե, ես հիշեմ, ինձ մասնակից դրձրու, և ես կհասկանամ»:

Խոսքային մեթոդները տարրական դասարաններում նույնպես լայն կիրառում ունեն. գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն ու պատմումը, արձակ և չափածո ստեղծագործությունների անգիր անելը, բանավեճերը և այլն: Բառապաշարի հարստացման աղբյուրն **ընթերցանությունն** է, դասերին տարվող բառային աշխատանքը՝ *բառիմաստի բացատրում* (անծանոթ բառը, ծանոթ ու հասկանալի դարձնելը), *ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների հայտնաբերում* (բառիմաստի ըմբռնման խորացում, խոսքի ճոխացում և գեղեցկացում), *սովորած բառի օգտագործումը խոսքի մեջ* (բառի սեփականացում):

Գործնական մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառմանը, խոսքային ունակությունների ու կարողությունների կիրառման կատարելագործմանը: Գործնական մեթոդների թվին են պատկանում տարաբնույթ խոսքային վարժությունները, լեզվական խաղերը, խաղ-բեմականացումները: Օրինակ երկրորդ դասարանում մայրենի լեզվի դասաժամերին իրականացվող բառակազմական և վերլուծական, գործնական աշխատանքները, որոնք կազմակերպվում են խաղերի ձևով, նպաստում են սովորողների լեզվական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորմանը:Երեխաներն աստիճանաբար կարողանում են պարզ բառերից կազմել բարդ և բարդաձանցավոր, ինչպես նաև հոդակապով և անհոդակապ բառեր:

Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումները և դրանց բովանդակության քննարկումն ու վերարտադրումը: Նկարներն, հատկապես, երբ դրանք գունավոր են, շատ վառ տպավորություն են թողնում երեխաների վրա և մի տեսակ հուշում, թելադրում են այն բառերն ու արտահայտությունները, որոնցով պետք է արտահայտի նկարում պատկերված առարկաներն ու գործողությունները: Բանավոր խոսքի զարգացման միջոցներից է **հեքիաթներ պատմելը**: Երեխաներին

հաճախակի պետք է հնարավորություն տալ իրենց իմացած հեքիաթները բարձրաձայն պատմել:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում առանձնահատուկ տեղ ու դեր ունի ընկալածի վերարտադրությունը:

Տեսածի, լսածի ու կարդացածի վերարտադրությունը ոչ միայն նպաստում է տպավորությունների ու պատկերացումների ուժեղացմանն ու կայունացմանը, այլև օգնում է երեխայի խոսքի զարգացմանը:

Տեսածի վերարտադրությունը հնարավորություն է տալիս երեխայի տեսած գործողությունները, դեպքերը, մարդկանց փոխհարաբերությունները վերարտադրել համապատասխան բառերով:

Լսածի վերարտադրությունը նպաստում է երեխայի մեջ ուշադրության և հիշողության դաստիարակմանը, հնարավորություն է տալիս ընդօրինակել ուսուցչի կամ լավ պատմող աշակերտի խոսքը:

Կարդացածի վերարտադրությունն օգնում է ինչպես ընթերցածը լավ մտապահելուն և աշակերտի մեջ պատմելու կարողություն մշակելուն, այնպես էլ կատարելագործում է բանավոր խեսքը, որովհետև պատմելու ժամանակ աշակերտն աշխատում է օգտագործել ուսումնասիրած բնագրում եղած բառերն ու դարձվածքները:

Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար մեծ նշանակություն ունի ուսուցչի խոսքը, որովհետև աշակերտները ձգտում են նմանվել նրան, նրա բառերը, նախադասություններ կազմելու ձևերը, լեզվական-արտահայտչական միջոցները, նույնիսկ խոսելու տոնն ու եղանակը:

Բանավոր խոսքի զարգացման միջոցներից է նաև **անգիր անելը՝** աշակերտները գիտեն բնագիրը շատ լավ կարդալ, բառերը բացատրել, պատկերացնելու են, թե ինչպես են արտասանելու և այլն, **էքսկուրսիաները՝** լսում ու պատմում են իրենց

տեսածի մասին, **ամփոփիչ դասերը, աշակերտական ցերեկույթները, քերականության և ուղղագրության ուսուցումը** և այլն:

Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար առաջադրվում են հիմնականում հետևյալ պահանջները՝

Մաքրություն: Երեխան դպրոց է գնում արդեն իսկ հսկայական լեզվական պաշարով, սակայն այդ խոսքը հաճախ լի է բարբառային բառերով, սխալ շեշտադրությամբ, չմշակված է և հեռու է գրական խոսք կոչվելուց: Ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների խոսքը լի է տարբեր լեզուներից վերցված բազմաթիվ բառերով ու արտահայտություններով:

Ճշտություն ու կանոնավորություն: Հայոց լեզվի բառապաշարի հարստությունն ու ճոխությունը հնարավորություն են տալիս ամենաբազմազան ու բազմապիսի մտքեր ու հասկացություններ ճշտությամբ արտահայտելու: Բազմաթիվ հոմանիշ, հականիշ, նույնանիշ ու նույնանուն բառերի ճիշտ ու նպատակահարմար ձևով օգտագործելու կարողությունը մարդու մեջ մշակվում է երկարատև ու հետևողական վարժությունների միջոցով: Խոսքի ճշտության տակ պետք է հասկանալ բառի ճիշտ ու տեղին օգտագործումը:

Պարզություն: Բանավոր խոսքին առաջադրվող պահանջներից մեկն էլ նրա պարզ լինելն է: Ավելորդ մանրամասնություններով ու ավելորդաբանություններով ծանրաբեռնված խոսքը չի կարող լիարժեք համարվել, որովհետև դա թուլացնում է խոսքի ուժն ու ներգործությունը լսողի վրա: Խոսքի ուժը պայմանավորված է նրա պարզությամբ ու հստակությամբ:

Կապակցվածություն: Կապակցված ու կուռ լինելը խոսքի տրամաբանական հաջորդականությունը պահպանելու, այն բովանդակալից ու նպատակային դարձնելու հիմնական չափանիշներից մեկն է: Առաջին դասարանից սկսած՝ երեխային պետք է սովորեցնել պատմել կապակցված ձևով՝ առանց պատմածի մեջ ընդմիջումներ տալու:

Բովանդակալից լինելը: Մարդու արտահայտած ամեն մի խոսք պետք է որևէ բովանդակություն ունենա, որևէ բան հաղորդի լսողին, վերաբերվի որևէ հարցի: Խոսելուց առաջ երեխան պետք է իմանա, թե ինչի մասին է խոսելու, իր իմացածը ինչ հաջորդականությամբ է շարադրելու: Դրա համար ամեն անգամ պատմելուց առաջ երեխաներին պետք է հարցնել, թե ինչի մասին և ինչ հաջորդականությամբ են պատմելու:

Արտահայտչականություն:Միևնույն խոսքը մեկի մոտ հաջող է ստացվում, մյուսի մոտ՝ անհաջող, մեկի ասածը լսողների մոտ խորը տպավորություն է թողնում, իսկ մյուսներինը՝ ոչ: Արտահայտիչ խոսքը հաճելի է, լսելի և դյուրընկալ, իսկ միապաղաղ տոնով ասված խոսքը՝ դժվարընկալ է, ուստի խոսքի արտահայտչականության վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել: [8]

Լեզվատրամաբանական առաջադրանքներ: Լեզվատրամաբանական խաղ-առաջադրանքները նպաստում են, որ երեխան ավելի ճիշտ պատկերացում ունենա շրջակա միջավայրի մասին, իր ստացած գիտելիքները կարողանա գործնականում կիրառել՝ ելնելով կոնկրետ իրավիճակից:

Այդ առաջադրանքների կատարումը նպաստում է երեխաների մեջ տրամաբանական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, առարկաները որևէ ընդհանուր հատկանիշով խմբավորելու, միևնույն հատկանիշներով առարկան գտնելու ունակության զարգացմանը: Այդ առաջադրանքների կատարումը նպաստում է երեխների մեջ տրամաբանական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, առարկաները որևէ ընդհանուր հատկանիշով խմբավորելու, միևնույն հատկանիշներով առարկան գտնելու ունակության զարգացմանը: Իսկ լեզվատրամաբանական առաջադրանքներ կատարելիս երեխան կամա թե ակամա սովորում է շշուկով կարդալ, կենտրոնանալ, որովհետև տվյալ դեպքում կարդալը ոչ թե նպատակ է նրա համար, այլ միջոց՝ հետաքրքրաշարժ բառախաղի պահանջը

[8] Ա. Ե. Տեր-Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 424

հասկանալու համար, միաժամանակ իր հետաքրքրասիրությունը բավարարելու համար:

Երեխայի մտքում մնում է այն, ինչ անցել է նրա սրտի դռնով: Եթե երեխան զվարթ է սովորում, նա ավելի լավ է սովորում: Հետաքրքրասիրությունը երեխայի ամենամեծ խթանն է: Երեխաներին ոչ թե պետք է ստիպել, որ նա ինչ-որ բան անի, այլ պետք է հետաքրքրել նրան, սովորեցնել մտածել, իր ուժերի նկատմամբ ինքնավստահություն ձեռք բերել:

Կարևորելով լեզվատրամաբանական առաջադրանքների դերն ուսումնական գործընթացի մեջ՝ անհրաժեշտ է նշել, որ դրանք առավելապես նպաստում են երեխաների տրամաբանական մտածողության զարգացմանը, մարզում են միտքը, սովորեցնում են սովորել, համառություն հանդես բերել, ճշգրտում են ստացած գիտելիքները, զարգացնում են դրանք կիրառելու կարողությունը և այլն:

Անդրադառնանք լեզվատրամաբանական առաջադրանքների ուսուցմանը:

Ճիշտ ու սխալ: Դրանք հետաքրքրաշարժ սյուժեներով նկարներ են, որոնք պարունակում են զանազան անհեթեթություններ: Այդ անհեթեթությունները նկատելու և ճիշտն արագ ներկայացնելու համար երեխայից պահանջվում են ճանաչողական գիտելիքներ, արագ կողմնորոշվելու կարողություն և այլն: Նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը, աշխարհաճանաչողական բավականաչափ նյութ է պարունակում, զարգացնում է զննողական, պատկերային մտածողությունը, համադրելու կարողությունը, դիտողականությունը:

Հորինիր մի պատմություն նկարի շուրջ: Նպատակաուղղված են երեխաների խոսքի, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Չկան կաշկանդող կանոններ. Երեխան ազատորեն կարող է ստեղծել ցանկացած պատմություն: Տարրականի դասագրքերում կան այսպիսի շատ նկարներ, որոնցում առկա է նաև կատակային դրվագներ, որոնք ուրախություն են պարգևում երեխաներին:

Ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր: Այս բնույթի առաջադրանքները երեխայի խոսքը, երևակայությունը զարգացնելու լավ միջոց են, առարկաներն ըստ

էական հատկանիշների բնութագրելու կարողությունների դրսևորման արդյունավետ հնարք: Այս բնույթի առաջադրանքի կատարումը, փաստորեն, համադրելու և հակադրելու, համեմատելու մտավոր գործողություն է, որը շատ արդյունավետ է կրտսեր դպրոցականի իմացական ակտիվության խթանման և նրա ընդհանրացնող մտածողության զարգացման համար: Այսպիսի համեմատություններ կատարելով՝ զարգանում է առարկան ըստ էական հատկանիշի ներկայացնելու կարողությունը:

Նկարելուկներ: Դրանք նկարների, նշանների, տառերի, նրանց փոխադարձ դասավորության և պատկերային այլ հնարքների համակցության միջոցով ծածկագրված բառեր կամ արտահայտություններ են, որոնք ենթակա են վերծանման: Նորելուկները լուծողին գրավում են իրենց հետաքրքրաշարժությամբ,լեզվի թաքնված հնարավորություններն ու գեղեցկությունները բացահայտելու ընթացքում ստացած բավականությամբ: Բառի մասերը նկարված տեսնելով, երեխաներն անմիջապես հորինում են նման բառեր:

Նույնտառիկ:Այս բառախաղի ժամանակ ելակետային բառերի բոլոր տառերով պետք է ստանալ նոր բառեր: Ենթադրենք տրված է *հասկ, մական, վիճակ, թթու* բառերը: Այս բառերի բոլոր տառերով կարելի է կազմել *հսկա, նամակ, կավիճ,թուք* բառերը:

Բառը բառի մեջ: Այս խաղը երեխաների դիտունակությունն, ուշադրությունը զարգացնելու համար է: Նպաստում է բառապատկերները միանգամից ընկալելու և կարդալու հմտությունների զարգացմանը: Երեխաների հիշողության մեջ ուրվագծվում է բառի մտապատկերը, որն էլ մտաբերելով նա գրում է:

Շարունակիր: Մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը զարգացնող, ինչպես նաև ճանաչողական բնութի առաջադրանք է, որի ժամանակ երեխաները սովորում են իրենց ունեցած գիտելիքը կիրառել ոչ ստանդարտ իրավիճակներում, կրկնում են ունեցած գիտելիքները:

Ո՞ր բառերն են ընկերներ: Այս լեզվատրամաբանական առաջադրանքը երեխաների տրամաբանական մտածողությանն է նպատակաուղղված,

առարկաների, երևույթների միջև զուգորդական կապեր հաստատելու և դրանք տրամաբանորեն հիմնավորելու նրանց կարողությունների զարգացմանը: Աշակերտ-ները պետք է հիմնավորեն իրենց ընտրությունը,այսինքն՝պետք է խնդրահարույց իրավիճակում կառուցեն տրամաբանորեն շաղկապված խոսք:

Այս առաջադրանքները քայլ առ քայլ բացում են երեխայի լեզուն, նա ավելի ու ավելի համարձակ է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է դրանք ձևակերպել տրամաբանական կաղապարներով, եզրակացություններ է անում, դառ-նում ինքնուրույն ու ինքնավստահ:

Այսպիսով՝ դեռևս վաղ մանկության տարիներին երեխայի մեջ ծագում է հաղորդակցման պահանջմունք, որը տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվում է: Հետագայում այդ պահանջմունքի բավարարման համար մարդը կատարելագործում է իր խոսքը, ձգտում է տիրապետել լեզվի գանձերին: Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով նաև գիտության և պրակտիկայի կապը:

II ԳԼՈՒԽ

Գրավոր խոսքի գործընթացը հոգեբանական և ֆիզիոլոգիական տեսակետից բավականին բարդ է: Այն ընդգրկում է երեխայի մտավոր գործունեության բազմաթիվ ոլորտներ և պայմանավորված է գլխուղեղի կեղևի տարբեր հատվածների՝ տեսողության, լսողության, օրգանների, խոսքի կառույցի, մարմնի մկանների գործունեությամբ: Դպրոցական ուսուցումը նոր սկսած երեխաների համար գործընթացն առավել դժվար է այն պատճառով, որ միաժամանակ ձևավորվում են ինչպես մատների նուրբ շարժումները կոորդինացնելու, ղեկավարելու կարողությունները, այնպես էլ ուղղագրական կանոններին համապատասխան գրելու ունակությունը:

<<Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ աշակերտների մեջ անսխալ գրելու և մտքերը գրավոր արտահայտելու հմտության կամ գրավոր խոսքի մշակումն է>>[9]: Եթե բանավոր խոսքի հիմնական տարբերիչ կողմը ուղղախոսությունն է, ապա գրավոր խոսքի համար տարբերիչ ու առանձնահատուկ կողմեր են *վայելչագրությունը*, *ուղղագրությունը* և *կետադրությունը*՝ առանց որոնց գրավոր խոսքը զրկված կլինի հաղորդակցման ընդհանուր միջոց լինելու առանձնահատկությունից: Ինչպես կարդալու և բանավոր խոսքի, այնպես էլ գեղեցիկ ու անսխալ գրելու և ինքնուրույն գրավոր խոսքի ուսուցման հիմքերը դրվում են տարրական դասարաններում:

Գրավոր խոսքի ձևավորման ու զարգացման ընթացքում տարրական դպրոցի աշակերտների առջև դրվում են բավականին բարդ խնդիրներ: Աշակերտների՝ գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողության ձևավորման և զարգացման նպատակով օգտագործվում են գրավորի 4 հիմնական տեսակները.

1. Արտագրություն, որը կարող է լինել **ընդօրինակման** և **ստեղծագործական**.
2. Թելադրություն, որը նույնպես կարող է լինել երկու տեսակ՝ ***սովորական*** (հնչյունային թելադրություն, նախազգուշական, ինքնաթելադրություն), և ***ստեղծագործական*** (ընտրովի, ազատ, հորինողական, առարկայական), ըստ անցկացման նպատակի՝ ***բացատրական*** և ***ստուգողական***:
3. Փոխադրություն, որը կարող է լինել չորս տեսակ՝ **բնագրին հարազատ կամ մանրամասն**, **համառոտ, ընտրովի, ստեղծագործաբար,**
4. Շարադրություն, որը կարող է լինել երեք տեսակ՝ **վերարտադրողական, ինքնուրույն և գործնական:**

[9] Տեր-Գրիգորյան., նշվ. Աշխ. ,էջ 430

Արտագրության նշանակությունը: Արտագրությունը տարրական դասարաններում գործադրվող գրավոր աշխատանքի հիմնական տեսակներից մեկն է: Արտագրելիս աշակերտը օրինակի վրա տեսնում է գրելիք բառի պատկերը, արտասանում, ուրեմն և լսում է բառի հնչյունական կազմը, այն գրելու համար ձեռքի որոշակի շարժումներ է անում, որոնք տեսնում և զգում է և, ի վերջո, տեսնում է իր գրածի առանձին տառերի համադրումից ստացված նոր բառապատկերը[10]:

Արտագրելիս աշակերտը կասկածի կամ երկընտրանքի մեջ չի ընկնում, որովհետև ակնառու կերպով տեսնում է բառն ու նրա գրության ձևը և ուզած վայրկյանին կարող է իր գրածի ճշտությունը ստուգել:

Արտագրությունը, որպես գրավոր աշխատանքի առանձին տեսակ, գործադրելի է տարրական բոլոր դասարաններում, սակայն տարբեր դասարաններում այն տարբեր բնույթ կարող է ունենալ: Այդ աշխատանքն սկսվում է աշակերտի տետրում ուսուցչի տված օրինակից և աստիճանաբար աշակերտի զարգացմանը զուգընթաց, ծավալվում ու բարդանում է:

Խոսք կառուցելու հմտությունը իր մեջ ամփոփում է բառապաշարի և քերականության տարրերի համատեղ կիրառումը: Բառապաշարը տալիս է խոսքի շինանյութը, իսկ քերականությունը՝ կառուցման օրինաչափություններն ու կանոնները, իսկ խոսք կառուցելու ունակությունը այդ երկուսը միավորելու, դրանցից նոր որակ ստանալու, նոր կառույց արարելու կարողությունը: Արտագրելու առաջադրանքը կրտսեր դպրոցականի համար բավականին բարդ հանձնարարություն է, այն կատարելու համար աշակերտը պիտի իրականացնի մի քանի մտավոր գործողություն՝ կարդա բնագիրը, այն հասկանա, իմաստավորի, արտագրի՝ պահպանելով ինչպես ուղղագրական, այնպես էլ վայելչագրական կանոնները: Արտագրությունը մեխանիկական աշխատանք չէ, ինչպես կարծում են ոմանք:

Արտագրությունները լինում են՝ **ընդօրինակման և ստեղծագործական**:

Ընդօրինակման արտագրության համար ուսուցման սկզբնական փուլում ընտրվում են ինչպես գրությամբ և արտասանությամբ համապատասխանող բառեր, այնպես էլ բառակապակցություններ, պարզ ընդարձակ նախադասություններ, որոնց ծավալը դասարանից դասարան ընդարձակվում է[11]:

Ընդօրինակման աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտագրության համար գրատախտակին գրված կամ դասագրքում տրված նյութն աշակերտները ոչ միայն պիտի բարձրաձայն կարդան, պարզաբանեն

[10] Նույն տեղում, էջ 431
[11] Ջ. Գյուլամիրյան, նշվ. Աշխ. էջ 289

անհրաժեշտ բառերի ուղղագրությունը և կետադրությունը, այլև ուսուցիչը բացատրի արտագրելու ընթացքը:

Ընդօրինակման արտագրություններն ունեն **չորս տարատեսակ**.

Ա. Արտագրություն վայելչագրական օրինակներից

Բ. Արտագրություն տետրում տրված օրինակից

Գ. Արտագրություն գրատախտակից

Դ. Արտագրություն գրքից

Հարկ է նկատել, որ սկզբնական շրջանում, նույնիսկ թելադրությամբ գրելիս, աշակերտը միշտ աչքի առաջ է ունենում գիտելիքի ձեռագիր տարբերակը, մտովի պատկերացնում է թելադրված բառերի կամ նախադասությունների ձեռագիր պատկերները, որ զգալի կերպով հեշտացնում է լսածը գրի առնելը:

Աշակերտները հակված են տառերով և վանկերով արտագրելուն: Սա մի կողմից շատ ժամանակ է խլում, իսկ մյուս կողմից՝ արտագրությունը դարձնում է չգիտակցված, մեխանիկական աշխատանք: Այսպես արտագրելիս աշակերտը ուղղագրությունը չի սովորի, որովհետև ուղղագրություն ասելով հասկանում ենք ոչ թե առանձին վերցրած որևէ տառի ուղիղ գրելը, այլ տառի գրությունը այլ տառերի կապակցության՝ բառի մեջ: Հետևաբար, եթե աշակերտը արտագրում է ոչ թե ամբողջական բառերով, այլ տառերով կամ վանկերով, նրա մեջ ամբողջական բառապատկերի ընկալում տեղի չի ունենում, քանի որ նա տեսնում, գրում և ընկալում է ոչ թե բառը, այլ բառի անիմաստ մասնիկները, որոնք կայուն մտապատկեր ստեղծել չեն կարող[12]:

Աշակերտին պետք է բացատրել, որ արտագրելու համար պետք է կարդալ ամբողջ նախադասությունը և ապա սկսել գրել՝ սկզբում ամբողջական բառերով , իսկ հետո՝ ամբողջական նախադասություններով:

Աշակերտի մեջ ամբողջական բառերով արտագրելու կարողություն մշակելու համար կարելի է սովորեցնել բառը մի անգամ կարդալուց հետո տառ առ տառ ինքն իրեն թելադրելով գրել ամբողջ բառը: Դա աշակերտին կօգնի ինքնուրույն կերպով բառը մի անգամ կարդալուց հետո տառ առ տառ ինքն իրեն թելադրելով գրել ամբողջ բառը: Դա աշակերտին կօգնի ինքնուրույն կերպով բառը հնչյունային վերլուծության ու համադրության ենթարկել, իսկ աշակերտը, որքան շուտ վարժվի դրան, այնքան ավելի շուտ ու հեշտ կսովորի ամբողջական բառերով ու նախադասություններով կարդալ ու գրել:

Գրքից արտագրություններ տալուց առաջ պետք է աշակերտներին բացատրել, որ արտագրելու համար հարկավոր է 1-2 անգամ ընթերցել ամբողջ նյութը, ապա այն

[12] Տեր-Գրիգորյան, նշվ. Աշխ., էջ 434

կարդալ նախադասություն առ նախադասություն և, եթե դրանք 2-3 բառից են կազմված, արտագրել նախադասություններով, իսկ եթե նախադասությունը մեծ է, ուշադրություն պետք է դարձնել նախադասության առաջին բառերի վրա, և առանց երկրորդ անգամ գրքին նայելու գրել առանձին բառախմբերով՝ ամեն անգամ 2-3 բառ: Երրորդ դասարանից սկսած պետք է սովորեցնել արտագրել 4-5 բառից կազմված նախադասություններով:

Արտագրության ժամանակ պետք է աշակերտին հիշեցնել այն ուղղագրական կամ քերականական կանոնը, որի ամրապնդման համար տրվում է այդ աշխատանքը, և դրանից հետո միայն անցնել արտագրելուն, որպեսզի այն լինի գիտակցված, նպատակային ու արդյունավետ:

Աշխատանք կատարելու ընթացքում ուսուցիչը պետք է լինի այն աշակերտների մոտ ովքեր օգնության կարիք են զգում և հսկի ու օժանդակի, որպեսզի նրանք սխալներ թույլ չտան:

Այսպիսով՝ ընդօրինակման կամ առանց բնագրի փոփոխման արտագրության դասը կարող է ունենալ հետևյան կառուցվածքը.

Աշխատանքի նպատակի պարզաբանում. Ասենք, ուսուցիչը <<Այբբենարան>>-ից արտագրել է տալիս որևէ ոտանավոր՝ նպատակ ունենալով սովորեցնել այն արտագրելու ձևը և ոտանավորի ամեն մի տողի սկզբում մեծատառի գործածության կանոնը: Դրա համար նրանց պետք է բացատրել, որ այդ դասին արտագրելու են իրենց արդեն ծանոթ բանաստեղծությունը, ապա պետք է ցույց տալ, որ ոտանավորն արտագրվում է էջի մեջտեղում, երկու կողմերից հավասարաչափ տարածություն թողնելով և նրա բոլոր տողերն սկսվում են մեծատառով:

Դպրոցում անհամեմատ ավելի լայն կիրառություն ունեն **ստեղծագործական** բնույթի կամ բնագրի փոփոխումով կատարվող արտագրությունները, որոնք գործադրելի են տարրական բոլոր դասարաններում: Այս արտագրությունները ստեղծագործական բնույթի են կոչվում այն պատճառով, որ բնագրերն արտագրելու աշխատանքն ուղեկցվում է ուղղագրական, լեզվական կամ տրամաբանական որևէ առաջադրանքի կատարումով: Այստեղ աշակերտը փաստորեն երկու ուղղությամբ է աշխատում՝ և՛ արտագրում է, և՛ որոշակի առաջադրանք կատարում, որի հետևանքով բնագրերը հաճախ լուրջ փոփոխության են ենթարկվում: Այսպիսի արտագրությունների ժամանակ նյութը արտագրելուն զուգընթաց աշակերտների մեջ ուղղագրական, քերականական կամ տրամաբանական որևէ խնդիր է դրվում, որի լուծման համար աշակերտը հարկադրված է առաջադրված նյութը մտքում վերլուծության ենթարկել, վերհիշել անցած ուղղագրական ու քերականական կանոնները, բազմակողմանիորեն հասկանալ բնագիրը, նոր միայն արտագրել:

Ստեղծագործական բնույթի արտագրություններն, ըստ իրենց առաջադրանքների լինում են **չորս տեսակ՝**

- Ուղղագրական
- Քերականական
- Ոճական
- Տրամաբանական

Սակայն, ըստ էության, սրանք սերտորեն կապված են միմյանց հետ, լրացնում ու ամբողջացնում են միմյանց:

Տարրական դասարաններում պետք է հանձնարարել հետևյալ արտագրությունները:

Արտագրել՝ պահանջված բառերն ընտրելով. Այսպիսի արտագրություններն կոչվում են նաև **ընտրովի արտագրություն**: Նման առաջադրանքով արտագրություն տալու համար պետք է ընտրել անցած ուղղագրական կամ քերականական կանոնին վերաբերող բառերով հարուստ նյութ: Աշակերտը սկզբում պետք է կարդա ամբողջ նյութը, ապա արտագրի միայն պահանջված բառերը: Բազմաթիվ բառերի մեջ գտնելով ու արտագրելով անհրաժեշտ բառը՝ երեխան սովորում է ընտրություն ու միևնույն տիպի առարկաների պարզ դասդասում կատարել, որը նպաստում է բառապատկերի կայուն մտապահմանը, զարգացնում է երեխայի տրամաբանական մտածողությունը և այլն:

Արտագրել՝ տրված բառերը խմբավորելով. Այսպիսի առաջադրանքով արտագրություններ տալու համար կարելի է ընտրել անցած ուղղագրական ու քերականական կանոններին վերաբերող բառերից կամ շրջապատի առարկաների ու երևույթների անուններից կազմված բնագրեր: Օրինակ՝ կարելի է տալ տնային սպասքեղենի, գործիքների ու հագուստների, ծառերի ու ծաղիկների, միջատների ու սողունների, հացաբույսերի ու խոտաբույսերի անուններ և այլն: Կարելի է տալ նաև ուղղագրական ու քերականական բնույթի աշխատանք, օրինակ՝ մի սյունակում արտագրել օ-ով, իսկ մյուսում՝ ո-ով սկսվող բառեր, կամ՝ մեկում առարկա ցույց տվող, իսկ մյուսում՝ գործողություն ցույց տվող, մի սյունակում՝ պարզ, իսկ մյուսում՝ բարդ կամ բարդ ածանցավոր բառերը և այլն:

Արտագրել՝ մտքով իրար հետ կապված բառերը խմբավորելով. Այսպիսի առաջադրանքով արտագրություն հանձնարարելու համար պետք է տալ այնպիսի բառեր, որոնք միմյանց հետ կարող են բառակապակցություններ կամ նախադասություններ կազմելու համար առանձին բառախմբեր ստեղծել:

Կարելի է տալ բույսերի և այն տեղերի անունները, որտեղ աճում են այդ բույսերը և հանձնարարել, որ աշակերտներն համապատասխան բառազույգեր կազմեն, օրինակ՝ խնձոր-այգի, սունկ-անտառ, ցորեն-արտ և այլն:

Արտագրել՝ փակագծում գրելով ընդգծված բառերին փոխարինող բառերը. Նման առաջադրանքով արտագրություն հանձնարարելու համար պետք է կազմել այնպիսի նախադասություններից բնագիր, որտեղ գործածված ենթականներն ու ստորոգյալները կարելի է փոխարինել համանման այլ բառերով՝ առանց նախադասության կառուցվածքը փոխելու:

Աշխատանքը կատարելու համար աշակերտները նյութը արտագրում են նախադասություն առ նախադասություն՝ ընդգծված բառերի մոտ փակագծերում գրելով դրանց փոխարինող բառերը, այնպես, որ նախադասության միտքը չաղավաղվի: Օրինակ՝ աշակերտը բնագրում կարդում է՝ Թռչունը թռչում է նախադասությունը, բայց արտագրելիս գրում է՝ Օդանավը, սարյակը կամ ծիծեռնակը թռչում է: Կամ, օրինակ՝ Թռչունը երգում է, թռչկոտում է, բույն է հյուսում և այլն: Այսինքն՝ մի դեպքում փոխել ենթակաները, իսկ մյուս դեպքում՝ ստորոգյալները՝ առանց նախադասությունը քայքայելու:

Արտագրել՝ լրացնելով բաց թողնված տառերը. Այսպիսի արտագրության համար պետք է վերցնել այնպիսի բնագիր, որտեղ լինեն երկու և ավելի ուղղագրական կանոնների վերաբերող բառեր, և բաց թողնելով կասկած առաջացնող տառերը, աշակերտներին առաջարկել արտագրել ամբողջ բնագիրը՝ լրացնելով այդ տառերը: Այսպիսի աշխատանքը աշակերտից պահանջում է ուղղագրական նման երևույթները տարբերակելու, աշխատանքը ինքնուրույն կերպով ու գիտակցորեն կատարելու կարողություն:

Արտագրել՝ լրացնելով բաց թողնված բառերը. Այսպիսի առաջադրանքով արտագրություն տալու համար պետք է վերցնել կապակցված կամ պարզ կառուցվածք ունեցող անկախ նախադասություններից կազմված բնագիր և դրանից հանել առանձին բառեր: Բնագիրն այնպես պետք է կառուցված լինի, որ նախադասության մեջ պահանջվող բառից բացի հնարավոր չլինի դնել, այլ բառ որպեսզի աշակերտը հեշտությամբ կարողանա կռահել այդ բառը: Նմանօրինակ արտագրություն տալու համար պետք է վերցնել միայն մեկ ուղղագրական կանոնի վերաբերող բառեր, որպեսզի աշակերտը երկընտրանքի մեջ չընկնի:

Արտագրել պատասխաննելով տրված հարցերին. Նման առաջադրանքով տրվող արտագրության բնագիրը պետք է կազմված լինի այնպիսի հարցերից, որոնց պատասխանելու համար աշակերտը կարող է օգտագործել հարցական նախադասության բառերը՝ փոփոխելով դրանց վերջավորությունը կամ տեղը նախադասության մեջ: Օրինակ՝ Ո՞վ է գրել <<Անահիտ>> և <<Քաջ Նազար>> հեքիաթները: Հարցերին պատասխանելու համար երեխաները կարող են օգտագործել հարցերի մեջ եղած բառերի զգալի մասը:

Արտագրել՝ բնագիրը փոխելով. Այս դեպքում տրվում է բնագիրը և առաջարկվում արտագրելիս փոխել բայերի դեմքը, թիվը կամ ժամանակը, գոյականների և դերանունների թիվը: Ասենք՝ եզակի թիվը դարձնել հոգնակի թիվ, առաջին դեմքը՝ երրորդ, ներկա ժամանակը՝ անցյալ և այլն: Սակայն դա այնպես պետք է արվի, որ բովանդակության իմաստը չաղավաղվի:

Արտագրել՝ վերականգնելով ձևափոխված բնագիրը. Աշակերտների մեջ ինքնուրույն կերպով կապակցված խոսք ստեղծելու կարողության զարգացման տեսակետից բացառիկ կարևոր նշանակություն ունի ձևափոխված բնագրերի վերականգնումը: Այս աշխատանքը կարող է լինել երկու տեսակ՝ ձևափոխված նախադասությունների և ձևափոխված ամբողջական բնագրի վերականգնում: Եթե առաջին դեպքում աշակերտը գործ ունի մեկ նախադասության, ապա երկրորդ դեպքում՝ մի ամբողջ բնագրի հետ և աշակերտից պահանջվում է մտովի վերականգնել նախադասությունների հաջորդականությունը, որ կապակցված խոսք ստացվի[13]:

Թե՛ ընդօրինակման, թե՛ ստեղծագործական արտագրությունների ժամանակ տարվող աշխատանքի մեթոդական շղթան հետևյալն է.

- Նախ՝ առաջադրանքի, ապա բնագիր ընթերցում,
- Առաջադրանքի պարզաբանում,
- Համապատասխան լեզվական նյութի կրկնություն,
- Ցուցումներ արտագրելու տեխնիկական կողմի վերաբերյալ,
- Բնագրի ընթերցում 1-2 աշակերտի կողմից,
- Մատների գրելուն նախապատրաստող վարժություն,
- Արտագրություն,
- Ինքնաստուգում,
- Գրավորների հանձնում[14]

Թելադրության նշանակությունը ինչպես բարձր, այնպես էլ տարրական դասարաններում գրավոր աշխատանքների ամենագործածական տեսակներից մեկն է: Մարդու գրագիտության չափանիշներից մեկը անսխալ թելադրություն գրելու հմտությունն է , որովհետև կյանքում մարդ ավելի շատ առիթ է ունենում թելադրությամբ, կամ ինքնաթելադրությամբ գրելու, քան արտագրելու, ուստի այդ կարողությունը պետք է առաջին դասարանից սկսած զարգացնել երեխաների մեջ և հետագա բոլոր գործողությունների ընթացքում կատարելագործել այն:

---

[13] Տեր-Գրիգորյան, նշվ. Աշխ., էջ 442

[14] Ջ. Գյուլամիրյան, <<Արտագրությունների, Թելադրությունների, Փոխադրությունների, Շարադրությունների>> ձեռնարկ, Երևան, 2016, էջ 6

Թելադրության միջոցով աշակերտներին գիտակցել ենք տալիս հայերենի գրության ու արտասանության միջև եղած տարբերությունները, վարժեցնում ենք սովորած ուղղագրական, քերականական ու կետադրական գիտելիքների գործադրման մեջ, հարստացնում ենք նրանց բառապաշարը, սովորեցնում ենք խոսք կառուցել:

50-80-ական թվականներին մեթոդական որոշ ձեռնարկներում տարբերակվում էր թելադրության շուրջ 12 տեսակ՝ **հնչյունային կամ լսողական, նախազգուշական, դիտողական, ինքնաթելադրություն, տեսողական, բացատրական, ընտրովի, ազատ, ստեղծագործական, նախազգուշական-բացատրական, դիտողաբացատրական, ստեղծագործական-բացատրական**, որոնք հետագայում համարվեցին ձևական, այսինքն՝ ոչ գործածելի: Ըստ էության այդ տարատեսակների մեջ էական տարբերություն չկար: Այնուհետև մեթոդական գրականության մեջ, ըստ անցկացման բովանդակության, ընդունեցին երկու խմբի թելադրություններ՝ սովորական և ստեղծագործական, իսկ ըստ անցկացման նպատակի՝ բացատրական և ստուգողական:

Սովորական թելադրություններ: Սրանք ըստ էության, ուսուցողական թելադրություններ են, որոնց անցկացման նպատակը աշակերտներին թելադրածը անսխալ գրի առնել սովորեցնելն է: Տարրական դպրոցում կիրառելի է սովորական թելադրությունների 3 տեսակ՝ **հնչյունային, նախազգուշական և ինքնաթելադրություն**:

1. **Հնչյունային թելադրություն.** Սկզբնական շրջանում, երբ դեռ աշակերտները նոր են սովորում թելադրություններ գրել, պետք է ուսուցիչն վերցնի այնպիսի բնագրեր, որոնք կազմված են գրությամբ և արտասանությամբ չտարբերվող բառերից, որպեսզի երեխաների մեջ իրենց սովորածի նկատմամբ կասկածանք չառաջանա, ամրապնդվի յուրաքանչյուր հնչյունն իր համապատասխան նշանով: Հնչյունային թելադրությունն ուղղագրական այնպիսի վարժություն է, որի ժամանակ աշակերտներն ուսուցման առաջին փուլում ուսուցչի օգնությամբ, այնուհետև ինքնուրույն հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, ապա կատարում են համադրում, որը գրելու և կարդալու հիմքն է: Առաջին դասարանում՝ գրաճանաչության շրջանում, կիրառելի են պարզ հնչյունային թելադրությունները: Նախ աշխատանքն սկսվում է անցած հնչյունների թելադրությունից, ապա յուրաքանչյուր տառն անցնելիս թելադրում են համապատասխան տառակապակցություններ՝ ձայնավոր+բաղաձայն, բաղաձայն+ձայնավոր կաղապարներով: Առաջին դասարանի 2-րդ կիսամյակում թելադրության համար նախատեսված են նախ՝ բառեր, ապա՝ բառակապակցություններ, հետո՝ պարզ ընդարձակ նախադասություններ, այնուհետև՝ մտքով իրար հետ կապակցված

նախադասություններ և կապակցված խոսք: Դասարանից դասարան թելադրության համար առաջադրվող նյութը բարդանում է:

Հնչյունական թելադրության անցկացման մեթոդական շղթան.

- Թելադրվող նյութի ընթերցում ուսուցչի կողմից
- Խմբային-լեզվական վերլուծություն
- Թելադրվող նյութի իմաստավորում՝ վերլուծություն-համադրություն
- Առանձին բառերի ուղղագրության որոշակիացում
- Տարբեր միջոցներով տվյալ ուղղագրական կանոնների վերհիշում, կրկնություն
- Թելադրության գրում
- Երկրորդ ընթերցում՝ ստուգման նպատակով
- Ինքնաստուգում
- Գրավորների հանձնում

2. **Նախազգուշական թելադրություններ**. Նախազգուշական են կոչվում սովորական թելադրության այն տարատեսակները, որոնց նախապատրաստման ժամանակ ուսուցիչը բոլոր միջոցները գործադրում է աշխատանքը գիտակցական, պարզ ու հասկանալի դարձնելու, ինչպես նաև հնարավոր սխալները կանխելու համար: Նախազգուշական թելադրությունները անցած ուղղագրական, կետադրական և քերականական կանոններն ամրապնդելու նպատակ են հետապնդում: Նախազգուշական թելադրության հիմնական մեթոդական առանձնահատկությունը սխալների կանխումն է, որն իրականացվում է ուսուցողական-բացատրական ուղիներով: Այս դեպքում ևս ոչ թե ուսուցիչը պատրաստի գիտելիքներ պիտի մատուցի՝ հիշեցնելով կամ բացատրելով այս կամ այն կանոնն ու սահմանումը, այլ այն պիտի վերհիշեն, իմաստավորեն և վերարտադրեն աշակերտները: Հիմնականում տարբերվում են նախազգուշական թելադրության նախապատրաստման ու անցկացման 2-3 ձևեր: Այդ եղանակներից մեկը բնագրի նախնական դիտումն է: Հնարավոր սխալները կանխելու համար՝ բնագիրը թելադրելուց առաջ տրվում է երեխաներին: Թելադրվելիք նյութի բառերը, որն ուսուցչի կարծիքով, դժվարություն կներկայացնեն երեխաների համար, գրում են գրատախտակին, որպեսզի ամբողջ դասարանը կարողանա աշխատել: Նախ առաջարկվում է նյութը լուռ կարդալ, ապա մի քանի աշակերտներ կարդում են բարձրաձայն: Երբ նյութն անհրաժեշտ չափով յուրացված է, պիտի ծածկել գրատախտակը և սկսել թելադրությունը:

Հնարավոր սխալներից երեխաներին նախազգուշացնելու հիմնական ձևերից մեկն էլ բնագրում ընդգծված լեզվական երևույթների՝ ուղղագրական, քերականական, կետադրական կանոնների բացատրումն է:

Նախազգուշական թելադրության իրականացման մեթոդական շղթան.

- Թելադրվող նյութի լուռ ընթերցում գրատախտակից
- Բարձրաձայն ընթերցանություն
- Նյութի բովանդակության և իմաստի մեկնաբանում
- Անհրաժեշտ բառերի կանոնների հայտնաբերում
- Բացատրական անհրաժեշտ մեկնաբանություններ
- Թելադրվող նյութի առաջին ընթերցում
- Նյութի թելադրում ուսուցչի կողմից
- Ինքնասուգում[15]

3. **Ինքնաթելադրություն**: Այն, ըստ էության, նախազգուշական թելադրության մի տարատեսակ է, որը, սակայն, աշակերտը գրում է ոչ թե ուսուչի, այլ իր թելադրությամբ: Նա, նախօրոք անգիր է անում այն, և տանը հանգամանորեն նախապատրաստվելով սովորածը ինքնուրույն գրի առնելուն, դասարանում, մտովի, ինքն իրեն թելադրելով, գրի է առնում այն: Որոշ մեթոդիստներ, նկատի ունենալով, որ թելադրման գործողությունն ընդհանրապես չի կատարվում, մտովի է կատարվում, այն կոչել են համր թելադրություն: Ինքնաթելադրությունը զարգացնում է աշակերտների հիշողությունը, ուշադրությունը, կամքը, սովորեցնում է կառավարել սեփական մտքերը, մշակում է հետևողական աշխատելու ունակություն:

Դասարանում նախապատրաստվող և անցկացվող ինքնաթելադրության մեթոդական շղթա.

- Նյութի ընթերցում գրատախտակից
- Ուղղագրական, իմաստային բացատրություններ, կետադրության մեկնաբանում
- Նյութի անգիր ուսուցում
- Ինքնաթելադրություն
- Ստուգում՝ գրատախտակին գրվածի հետ համեմատելով
- Գրավորների հանձնում

Ստեղծագործական թելադրություններն ուսուցչին ու աշակերտներին մղում են լեզվաոճական և տրամաբանական աշխատանքների, որոնք նրանք պետք է

[15] Ջ. Գյուլամիրյան, նույն տեղում, էջ 8

կատարեն թելադրությանը զուգընթաց: Գրավորի այս տեսակը նախատեսված է կիրառել 2-րդ և 4-րդ դասարաններում: Ստեղծագործական թելադրությունների ժամանակ տրվող հանձնարարությունները երբեմն կարող են այն աստիճանի ձևափոխել թելադրվող նյութը, որ այն կարող է նույնիսկ դառնալ պարզապես փոխադրություն: Ստեղծագործական բնույթի թելադրությունները զարգացնում են աշակերտի երևակայությունը, նրա մեջ լեզվառճական աշխատանք ու բառերի ընտրություն կատարելու, առաջադրված միտքը այլ կերպ ձևակերպելու կարողություն են մշակում: Ստեղծագործական բնույթի թելադրությունն ունի իր տարատեսակները՝ **ընտրովի, ազատ, հորինողական, առարկայական:**

1.Ընտրովի թելադրությունները գործադրելի են հիմնականում 2-րդ և 3-րդ դասարաններում, երբ աշակերտներն արդեն տիրապետում են սովորական թելադրություններ գրելու կարողություններին: Դրանք նպաստում են սովորողների ուշադրության կենտրոնացմանը, հիշողության զարգացմանը, համադրելու, հակադրելու, ընդհանրացնելու կարողությունների ձևավորմանը:

Ընտրովի թելադրության համար կարող են նյութ ծառայել սովորական թելադրության բնագրերը՝ ըստ որոշակի առաջադրանքների. Օրինակ՝ թելադրված նյութից գրի առնել միայն գոյական անունները, որևէ ուղղագրական կանոնին վերաբերող բառեր, եզակի թվով գործածված բառեր, ածականներ, հատուկ անուններ և այլն:

2.**Ազատ թելադրությունը** որոշ կողմերով նման է փոխադրության, հետևաբար ոչ միայն մշակում է ունկնդրածը գրագետ գրի առնելու կարողություն, այլև ձևավորում է ինքնուրույնաբար կապակցված խոսք շարադրելու ունակություն: Այն, բնականաբար, ավելի բարդ է, և այդ գործում ուսուցչից պահանջվում է առավել ջանադիր աշխատանք: Թելադրության այս տեսակի անցկացման համար ևս կարելի է տեքստ ընտրել ինչպես մայրենիի դասագրքերից, այնպես էլ ժողովածուներում առաջադրվածներից՝ նկատի ունենալով, որ այդ նպատակով ընտրված բնագիրը պետք է ունենա ոչ թե նկարագրական բնույթ, այլ պիտի պարունակի դեպքեր, ունենա հերոսներ և համեմատաբար ծավալուն լինի: Փաստորեն ազատ թելադրությունը ոչ թե բառերի, այլ մտքերի թելադրություն է: Բնագիրն ընթերցվում է մասերով, իսկ աշակերտները գրի են առնում նրանում արտահայտված միտքը՝ <<իրենց բառերով>>[16]:

3. **Հորինողական թելադրությունները** տարաբնույթ են և իրականացվում են ինչպես տրված թեմայով հենակետային բառերի հիման վրա տեքստը կազմելու, այնպես էլ առանձին <<մտքերի թելադրման>>, այսինքն՝ ազատ թելադրության ուղիներով:

[16] Ջ. Գյուլամիրյան, նույն տեղում, էջ 10

Հորինողական թելադրությանը պիտի մանրակրկիտ նախապատրաստվել, ընտրել հենակետային բառեր: Այն կարելի է գրել և՛ նախադասություն առ նախադասություն, և՛ պարբերություն առ պարբերություն, և՛ ամբողջական տեքստով: Բոլոր դեպքերում էլ աշխատանքը պետք է սկսել հենակետային բառերի ուղղագրության և իմաստների շուրջ տարվող բացատրություններից, այնուհետև դրանցով պիտի կազմվեն մտքով իրար հետ կապված նախադասություններ, որոշվի, թե որ նախադասությունը որի տրամաբանական շարունակությունն է կազմում, ընտրվեն լավագույնները, ամբողջացվեն, հղկվեն, և նյութը պատմվի ամբողջությամբ: Այս աշխատանքում չափազանց կարևոր է բոլոր աշակերտների մասնակցությունը տեքստի ստեղծման աշխատանքներին:

4.**Առարկայական թելադրության** ժամանակ ցուցադրվում են առարկաներ կամ դրանց նկարները, իսկ աշակերտները պիտի լուռ գրեն համապատասխան անունները: Թելադրության այս տեսակն օգտագործվում է 1-ին դասարանում՝ երեխաների մեջ ինքնաթելադրություն գրելու կարողության ձևավորման և բառապաշարի հարստացման նպատակով:

Փոխադրությունները սովորողների խոսքի զարգացման հրաշալի միջոց են: Որպեսզի փոխադրություն գրելու գործընթացը զարգացնի երեխայի՝ կապակցված խոսք կառուցելու և այն գրի առնելու կարողությունները և ոչ թե դառնա ունկնդրածի մեխանիկական վերարտադրություն, փոխադրության համար ընտրված նյութի գաղափարը՝ հիմնական միտքը, աշակերտը պետք է հասկանա, զգա դեպքերի տրամաբանական կապերը և <<իր բառերով>> վերարտադրի[17]:

Որքան էլ որ ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրելիս կարևորվում է աշակերտի ինքնուրույն խոսքը, այնուամենայնիվ պիտի ձգտել, որ աշակերտը բնագրի որոշ բառեր, արտահայտություններ, մտքեր վերարտադրի՝ հարազատ մնալով հեղինակի ոճին և լեզվին:

Սովորաբար տարրական դասարաններում կիրառվում են փոխադրության հետևյալ տեսակներն.

1. **Բնագրին հարազատ կամ մանրամասն**
2. **Համառոտ**
3. **Ընտրովի**
4. **Ստեղծագործաբար**

1.**Բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրությունը** հանձնարարելի է բոլոր դասարաններում: Փոխադրությանը նախապատրաստելիս պետք է տրվեն կողմնորոշող հարցաշար և հենակետային բառեր և բառակապակցություններ:

[17] Ջ.Գյուլամիրյան,<<Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա>>, էջ 295

Երկրորդ դասարանում փոխադրության անցկացման մեթոդական շղթան.

Ա. Բնագրի ընթերցում ուսուցչի կողմից՝ աշակերտների համար

Բ. Հարցազրույց ընթերցած բնագրի բովանդակության շուրջ: Հարցազրույցի ժամանակ պետք է բնագրի նախադասությունները կրկնել, հասկանալով միտքը՝ ինքնուրույնաբար վերարտադրեն:

Գ. Բնագրի կառուցվածքի դիտարկում, հիմնական մասերի առանձնացում:

Դ. Աշխատանք բնագրի շուրջ. անծանոթ բառերի, ուղղագրական դժվարություններով բառերի, բառակապակցությունների դիտարկում:

Ե. Գրատախտակին գրված հարցաշարի և հենակետային բառերի միջոցով նյութի պատմում:

Զ. Բնագրի ամբողջական պատմում 1-2 աշակերտի կողմից:

Է. Բնագրի գրառում

Ը. Ինքնաստուգում

Թ. Գրավոր աշխատանքների հանձնում

2. **Համառոտ փոխադրություն:** Երրորդ և չորրորդ դասարաններում փոխադրության բնագրերն աստիճանաբար բարդանում են: Այս դասարաններում նյութի սովորական փոխադրմանը զուգընթաց կարելի է անցկացնել այնպիսի աշխատանքներ, որտեղ բնագիրը վերարտադրվում է համառոտելով, բայերի դեմքն ու ժամանակը փոխելով, ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելով և այլն:

Այս տիպի վարժություններ տալու համար պլան կազմելուց հետո՝ բնագրի բանավոր վերարտադրման ժամանակ երկու կարգի աշխատանք պետք է կատարել՝ նախ բովանդակությունը վերարտադրել, տալ սովորական ձևով, ապա բոլոր աշակերտներին մասնակից դարձնելով՝ բնագրի մեջ համապատասխան փոփոխություններ մտցնել[18]:

Համառոտ փոխադրելիս հաճախ գեղարվեստական բնագիրն աղքատանում է՝ վերածվելով փաստերի թվարկության: Այդ երևույթը կանխելու համար, աշակերտներին պետք է սովորեցնել ոչ թե բաց թողնել պատահական, իրենց կարծիքով ավելորդ հատվածները, այլ ընդարձակ արտահայտված հեղինակային միտքը հակիրճ ներկայացնել:

3. **Ընտրովի փոխադրության ուսուցման** մեթոդիկան նման է ընդարձակ և համառոտ փոխադրություններին, սակայն փոխադրության այս տեսակը գրելիս երեխաները վերարտադրում են ստեղծագործության միայն մեկ հատվածը: Ընտրությունը կատարում է կա՛մ աշակերտը, կա՛մ ուսուցիչը:

[18] Ա.Ե. Տեր-Գրիգորյան, նշվ. Աշխ. , էջ 467

Ընտրովի փոխադրությունը կապող օղակ է փոխադրության և շարադրության միջև: Այն իրականացվում է միայն չորրորդ դասարանում, երբ աշակերտներն ունեն բնագրի շուրջ աշխատելու որոշակի կարողություններ, կարող են բացահայտել թեման, կռահել հիմնական միտքը, դատողություններ անել, հասկանալ ենթատեքստը և այլն:

4. **Ստեղծագործական են փոփոխություններով և լրացումներով** իրականացվող այն փոխադրությունները, որոնց դեպքում բնագիրը վերարտադրվում է գործող անձերից մեկի անունից, ինչպես նաև պատմողի դեմքի փոփոխումով: Կարելի է վերարտադրել նյութը նաև իբրև դեպքին մասնկից կամ ականատես: Ստեղծագործական լրացումներով կամ փոփոխություններով փոխադրությունը չորրորդ դասարանում նպատակահարմար է որոշ նախապատրաստական աշխատանքից հետո նաև հանձնարարել տնային աշխատանք:

Շարադրությունը ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է, քանի որ խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն…

Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ: Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Կապեր ստեղծել իմացածի ու նոր ձեռք բերած գիտելիքների միջև և երևույթի կամ առարկայի մասին բանավոր խոսք կառուցել՝ արտահայտելով սեփական տպավորություններն ու տրամադրությունը: Նորածանոթ բառերն օգտագործել բառակապակցությունների մեջ: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային, մակաբույծ բառերից: Արդեն հետայբբենական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները:

Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար աշակերտներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համար է: Աշակերտներին կարելի է

առաջարկել իրենց խոսքը կառուցել շաղկապների միջոցով (Գիրքը կարդալու համար է, իսկ գրիչը՝ գրելու: Ինձ դուր չեկավ տղայի արարքը, որովհետև նա դրանով ցավ պատճառեց մեկ ուրիշին և այլն): Խոսքի կառուցման այս եղանակը կնպաստի աշակերտների տրամաբանված խոսքի զարգացմանը:

Բառի մասին գաղափար տալուց հետո կատարում ենք եզրահանգում, որ յուրաքանչյուր առարկա ունի իր անվանումը, յուրաքանչյուր բառ ունի իր նշանակությունը, իմաստը: Երեխաներին բացատրում ենք, որ բառը պետք է անպայման իմաստ ունենա, որ հնչյունների ամեն կապակցություն բառ չէ: Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները: Այդ աշխատանքներն իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների, հոմանիշների, հականիշների դուրսգրման միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Կրտսեր դպրոցականին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը, բառարանում գտնել նորածանոթ բառի բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի աշակերտի մեջ ձևավորվի նյութի մեջ նոր բառի ճանաչման ու ընկալման կարողություն: Այս տարբերակը լայն հնարավորություն է տալիս աշակերտին անընդհատ և բազմակողմանիորեն հարստացնելու բառապաշարը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնառության տարիներին ուսումնասիրվում են տարբեր առարկաներ, որոնց դասագրքերը մի մեծ բառարան են բառապաշարի հարստացման համար:

Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր գործառույթ է երեխայի մտածողության զարգացումը, պատկերավոր մտածողությունից վերացական մտածողության անցումը, սակայն այդ ամենը պետք է իրականացնել կոնկրետ փաստերի, ակնառու

նյութերի հիման վրա, որպեսզի այն հասանելի լինի աշակերտի դատողական մտածողությանը: Իհարկե, հետագայում աստիճանաբար պատկերներով աշխատելու ծավալը պետք է կրճատվի: Տարրական դպրոցում կարևոր խնդիր է հիշողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Կրտսեր դպրոցականներից շատերն օժտված են մեխանիկական հիշողությամբ և ուսուցման ընթացքում բավականին հեշտ անգիր են անում ուսումնական տեքստերը: Հաճախ են հանդիպում այնպիսի երեխաներ, որոնք նյութը վերարտադրելիս այն կարդում են «օդում»՝ դասագրքի նյութը մտովի բերելով տեսողական դաշտ: Այս երևույթը դժվարության է հանգեցնում միջին դասարաններում, քանի որ ուսուցանվող նյութերն աստիճանաբար դառնում են բարդ ու ծավալուն: Աշակերտները սկսում են բառացի վերարտադրել իրենց մտապահածը: Նրանք չեն ձգտում բացահայտել երևույթի էությունը, այլ հաջողությամբ կրկնօրինակում են: Հետևաբար կրտսեր դպրոցում պետք է կատարելագործել հիշողությունը, յուրացնել տալ մտապահման ավելի իրատեսական մեթոդներ: Երեխան պետք է սովորի իմաստավորել ուսումնական նյութը, հասկանալ, քանի որ մտածելու, իմաստավորելու ընթացքում նյութն ամրակայվում է երեխայի հիշողության մեջ: Մտապահման գործընթացը պետք է անպայման վերահսկվի ծնողների և ուսուցչի կողմից: Նյութը հասկանալով մտապահելու կարողությունը զարգացնելու համար ուսուցիչը տեքստը բաժանում է իմաստային մասերի, քննարկում և բացատրում: Իմաստավորված ուսուցման դեպքում նյութը յուրացվում է ավելի հեշտ և վերարտադրելիս աշակերտների խոսքը կառուցվում է ավելի ճիշտ ու հասկանալի: Տարրական դպրոցում ձևավորելով նյութի մտապահման այս կարողությունը՝ միջին դպրոցականն արդեն չի դժվարանա ուսումնական ծավալուն տեքստերի մտապահման ու վերարտադրման ժամանակ: Աշակերտների խոսքը զարգացնելու համար հանձնարարվում են կազմել նախադասություններ, հորինել պատմություններ որևէ նկարի, սեփական դիտումների վերաբերյալ: Հետաքրքրություն մտցնելու համար խմբակային կամ անհատական տարբերակով կարող ենք տալ ուսուցանվող թեմային վերաբերվող

անգույն նկար, հանձնարարել, որ նրանք հորինեն պատմություն նկարի շուրջ, մեկնաբանեն այն, ապա գունազարդեն նկարը, քանի որ նկարելու ընթացքում երեխան ևս մեկ անգամ վերհիշում է կարդացածը, մտքում պատմում, մտորում երևույթի շուրջ, ինչը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխայի ներքին խոսքը : Այս եղանակով կզարգանա աշակերտների վերացական մտածողությունը, և նրանք իրենց մտածածն ու զգացածը կարող են ներկայացնել ոչ միայն նկար միջոցով, այլ նաև խոսքով: Այդ ամենը տանելով խաղին զուգահեռ, կոգևորենք երեխային՝ սովորելը նրա համար դարձնելով ուրախ ու հետաքրքիր մի զբաղմունք: Նմանատիպ աշխատանքներ կարելի է կազմակերպել նաև տանը՝ համագործակցելով ծնողների հետ: Երեխայի ազատ ժամանակը հետաքրքիր և ուսանելի դարձնելու նպատակով ծնողները ևս կարող են երեխաների հետ զբաղվել նկարների գունավորման աշխատանքներով, նկարների վերաբերյալ պատմություններ հորինել, որի ընթացքում երեխայի մեջ կարող է ձևավորվել անկաշկանդ խոսելու կարողություն: Տարրական դասարանում խոսքի զարգացմանը միտված աշխատանքներում պետք է ուշադրություն դարձնել նաև արտասանական վարժություններին: Աշակերտները պետք է հասկանան, որ միալար ու անկենդան խոսքը, որը չունի զգացմունքային տարրեր, արտահայտիչ չէ, չի կարող հաճելի լինել ունկնդրի համար: Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված աշխատանքներ: Աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել՝ կիրառելով խոսքային և ոչ խոսքային (դիմախաղ, կեցվածք, ժեստ և այլն) միջոցներ: Աշակերտների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև ընդօրինակման և ստեղծագործական բնույթի արտագրությունները, շուտասելուկների, ուղղախոսության կանոնների ճիշտ կիրառմամբ բառախաղերի արտասանությունը, ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ կարծիքների և տպավորությունների փոխանակումը, հիշողությամբ կամ

նկարով պատմելը, նյութի վերարտադրելը նույնությամբ կամ ստեղծագործաբար: Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցումը, որի նկատմամբ սերը դրվում է տարրական դասարանում: Աշակերտների տրամաբանական մտածողության, հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով ևս պետք է կատարել տարբեր վարժություններ: Օրինակ՝ տեքստի խառնված նախադասությունների շտկում, պլանի կազմում և դրան համապատասխան պատմության հորինում: Տարրական դասարաններում ուսումնական նյութն անցնելիս ուսուցիչը սովորեցնում է դուրս գրել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, ձևավորում հերոսների արարքների դրդապատճառը որոշելու կարողություններ, պահանջում բանավոր կամ գրավոր արտահայտել իրենց կարծիքը հերոսների վարքագծի կամ դեպքերի վերաբերյալ: Ուսուցչի կողմից պետք է մշակվի նաև խոսքային տարբեր իրավիճակներում համապատասխան տարբեր ոճերով կապակցված խոսք կառուցելու կարողություններ: Օրինակ՝ էքսկուրսիաների, դիտումների միջոցով կառուցել նկարագրական խոսք բնության, այս կամ այն առարկայի կամ երևույթի վերաբերյալ՝ կիրառելով ստեղծագործական և երևակայական կարողություններ, կազմել դատողական խոսք կարդացածի կամ լսածի վերաբերյալ և այլն: Մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում տարրական դասարաններում անհրաժեշտ է զարգացնել տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողություններ: Նրանք պետք է կարողանան տեքստից առանձնացնել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, բնության նկարագրության հատվածները, կարողանան հակադրել հերոսներին և նրանց արարքները, վերհանեն դրանց դրդապատճառները, դրսևորեն գնահատողական վերաբերմունք: Աշակերտները կարող են բանավիճել հերոսների վարքագծի, ինչպես նաև մինչ այդ իրենց ձեռք բերած փորձի և տեսակետների վերաբերյալ: Նրանք պետք է կարողանան տեքստի բովանդակությունը վերարտադրել դատողական տարրերով, իրենց վերաբերմունքը հաստատելու համար բերել

փաստարկներ: Այս ամենը տարրական դասարաններում պետք է իրականացվի ուսուցչի ուղղորդմամբ, որպեսզի միջին դպրոցում աշակերտներն ավելի անկաշկանդ ու հիմնավորված կարողանան ներկայացնել իրենց տեսակետներն ու կարծիքները, նրանց խոսքն ունենա տրամաբանված ու կուռ կառուցվածք: Աշակերտներին գիտելիքները պետք է տրվեն ոչ այնքան դրանք իմանալու, որքան դրանց վերաբերյալ դատելու կարողություն ձևավորելու նպատակով, որովհետև միտքը կատարելագործվում է ավելի շատ մտածելու, քան սերտելու ընթացքում: Խոսքի հետագա զարգացմանը մեծապես կարող է նպաստել նաև լեզվական գիտելիքների հիման վրա աշակերտների խոսքի ոճական-քերականական հարստացումը, խոսքը լսելու և հարկ եղած դեպքում բանավիճելու կարողության զարգացումը, լսած նյութից խոսքի գլխավոր միտքն առանձնացնելը, իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն խոսք կառուցելու, սկիզբը կամ ավարտը հորինելու կարողությունների մշակումը և այլն: Խոսքի զարգացմանն ուղղված վերոնշյալ բոլոր աշխատանքները հետապնդում են մեկ նպատակ՝ զարգացնել աշակերտների պատկերացումները, ընդարձակել մտահորիզոնը, ձևավորել բարոյական վարքագիծ, իսկ սերնդի կրթության և դաստիարակության գործընթացն իրականացվում է հանրակրթական դպրոցում: «Ինտելեկտուալ տեսանկյունից այն մարդուն կարելի է անվանել կրթված, որը ձեռք է բերել ուշադրության և դատողության կարողություն, տիրապետում է մտքի կարգապահությանը, կարողանում է կառավարել իր մտավոր ընդունակությունները»[19]: «Իսկ գիտակցական ուշադրությունը միշտ կապված է դատողությունների, մտածմունքների, կշռադատությունների հետ: Դա նշանակում է, որ երեխայի մեջ իր սեփական հարցն է առաջանում, որ նա գործնականորեն զբաղվում է դրան պատասխանելու համար նյութ որոնելով և ընտրելով, գիտակցելով այդ նյութի առանձնահատկությունն ու որակը՝ դրա պիտանելիությունը հարցի

[19] Դյուի Ջ., Դպրոցը և հասարակությունը, «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան, 2008, 88 էջ:

լուծման համար: Սեփական մտավոր ուժերից օգտվելու կարողություն է ձևավորվում»: Այսպիսով, զարգացնելով և բարձրացնելով երեխայի ինտելեկտը՝ հող ենք նախապատրաստում նրա հոգեկան ֆունկցիաների զարգացման համար, երևույթների արտաքին և ներքին հատկություններն ու հարաբերությունները ճանաչելու շնորհիվ սովորողը ձեռք է բերում յուրացրած գիտելիքների շուրջ տրամբանված խոսք կառուցելու հմտություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ՝ կարելի է ունենալ հարուստ բառապաշար, իմանալ տվյալ լեզվի քերականությունը, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին, սակայն չունենալ գրագետ, տպավորիչ, համոզիչ, արտահայտիչ խոսք:

Նախադպրոցական մանկությունն այն ժամանակաշրջանն է, որը բացահայտում է երեխայի ստեղծագործական կարողությունները, անհատականության ձևավորման հիմքերը: Գիտելիքների հաղորդման գործընթացն անհրաժեշտ է իրականացնել՝ օգտագործելով որքան հնարավոր է շատ խաղալիքներ, դիդակտիկ խաղեր, դիտումներ, առաջարկել խոսք կառուցել այնպիսի նկարների շուրջ, որոնց բովանդակությունն հոգեհարազատ է երեխաներին, բխում է նրանց առօրյայից, համապատասխանում է իրականությանը:

Ուսումնասիրելով այս թեմայի շրջանակներում առաջադրված խնդիրները հանգել եմ այն եզրահանգման, որ առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով ու արտահայտվում է հենց խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը տարրական դպրոցի դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել: Ենթադրում եմ, որ բոլոր մեթոդներն էլ արդյունավետ են, եթե դրանք տեղին են կիրառվում :

Դեռևս վաղ մանկության տարիներին երեխայի մեջ ծագում է հաղորդակցման պահանջմունք, որը տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվում է: Հետագայում այդ պահանջմունքի բավարարման համար մարդը կատարելագործում է իր խոսքը, ձգտում է տիրապետել լեզվի գանձերին: Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով նաև գիտության և պրակտիկայի կապը:

Տարրական դասարաններում լեզվական նյութը չպետք է կազմի դասատվության նպատակ, այլ այն պետք է լինի միայն միջոց նպատակին հասնելու համար, այսինքն՝ միջոց գրական լեզուն ճշտությամբ հասկանալու, շարահյուսորեն ճիշտ, կապակցված, սահուն խոսք կառուցելու համար:

Հենց այս են նկատի ունեցել մայրենի լեզվի գործող դասագրքերի հեղինակները, որ ստեղծել են ընթերցանության և լեզվական նյութի միասնական դասագիրք և ընթերցանության ու լեզվական նյութի միաձույլ ուսուցում, որը հնարավորություն է տվել լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու:Այս դեպքում երեխաները քերականական կանոններն ու սահմանումներն պետք է հասկանան և կարողանան կիրառել և ոչ թե անգիր սովորել, որի դեպքում լեզվական օրինաչափություններն կկարողանան ինքնուրույնաբար կիրառել իրենց խոսքում, արդյունքում զարգանելով մտածողությունը, դատողական ունակությունները, որը և քերականության առջև դրված նպատակն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ.«Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, 2015էջ 262
2. Ա. Մ. «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1989, էջ 21
3. Ա. Ե. «Տեր-Գրիգորյան Հայոց լեզվի մեթոդիկա», Երևան, 1980, էջ 412
4. Ա. Ե. Տեր-Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 416
5. Կ.Դ. Ուշինսկի , «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան,1949, էջ 129-130
6. Է. Աղայան, «Լեզվաբանության ներածություն», 1953, էջ 201
7. Գյուլամիրյան, նշվ.աշխ., էջ 272
8. Ա. Ե Տեր-Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 424